430

1. Դառնացել է կյանքն այս աշխարհում,
Եվ հոգնել ենք այս մեծ պայքարում,
Մոտեցել է կորուստն աշխարհի,
Եկ ընդունենք խաչը Հիսուսի:
Խաչը Հիսուսի (2)
Մեր սրտում վառել է ջահ լույսի:

2. Խավարն է իշխանն այս աշխարհի,
Ոռնում է խելագար ու վայրի,
Ատում են բոլորը մեկմեկի,
Կանչում է Հիսուսը մեր բարի:
Տերը մեր բարի (2)
Մեր սրտում վառել է ջահ լույսի:

3. Քո արյամբ մենք գտանք թողություն,
Քո խաչով մենք գտանք հաղթություն,
Կյանք տվիր ամեն Քեզ սիրողին,
Հավետ Քեզ հետ լինենք, Հիսո՛ւս իմ:
Քեզ հետ, Հիսո՛ւս իմ (2)
Հավետ Քեզ հետ լինենք, Հիսո՛ւս իմ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025